

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հուլիսի 21-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարի Ավագ սեղանի վրա ս. պատարագ է մատուցում Տ. Նարեկ քհն. Մատարյանը:

«Հայր մեր»-ից առաջ պատարագիչ տեր հայրը ընթերցում է Վեհափառ Հայրապետի կոնդակը՝ գրված ապգային բարերար Գալուստ Կյուլպենկյանի մահվան 30-ամյակի առթիվ:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում հոգեհանգստյան արարողություն՝ Գալուստ Կյուլպենկյանի հիշատակին:

* * *

Հուլիսի 28-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարի Ավագ սեղանի վրա ս. պատարագ է մատուցում Տ. Գրիգոր ավագ քհն. Տերտերյանը:

* * *

Հուլիսի 28—օգոստոսի 8 օրերին Բուենոս Այրեսում տեղի ունեցավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կենտրոնական Կոմիտեի տարեկան հերթական հանդիպումը, որին Հայ Առաքելական Եկեղեցու կողմից մասնակցեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պողապյանը:

* * *

Օգոստոսի 4-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարի Ավագ սեղանի վրա ս. պատարագ է մատուցում Հունաստանից ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Հակոբ քհն. Ռուստամյանը:

«Հայր մեր»-ից առաջ խոսած իր քարոզում պատարագիչ տեր հայրը հավատացյալներին ծանոթացնում է հունահայոց թեմի կյանքին:

* * *

Օգոստոսի 11-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարի Ավագ սեղանի վրա ս. պատարագ է մատուցում Տ. Նարեկ քհն. Մատարյանը:

* * *

Օգոստոսի 18-ին, կիրակի.—Վերափոխումն Ս. Աստուածածնի.

Այսօր Մայր տաճարի Ավագ սեղանի վրա ս. պատարագ է մատուցում Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը:

Հավարտ ս. պատարագի տեղի է ունենում «Օրհնութիւն խաղողոյ»:

*
* *

Օգոստոսի 19-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց.

Այսօր Մայր տաճարի Ավագ սեղանի վրա ս. պատարագ է մատուցում Տ. Եղիշե քհն. Բաղրամյանը:

«Զկնի սրբոյ պատարագի» կատարվում է «հոգեհանգիստ վասն համօրէն ննջեցելոց»:

* *
*

Նույն օրը, երեկոյան ժամը 21.30-ին, Կիսլովոդսկի «Կրասնոյե կամնի» առողջարանից Մայր Աթոռ վերադարձավ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը:

* *
*

Օգոստոսի 23-ին, ուրբաթ.—Այսօր հոգևոր ճեմարանում, տեսուչ Տ. Եղնիկ քհն. Պետրոսյանի նախագահությամբ, սկսվում են հոգևոր ճեմարանի 1985—86 ուսումնական տարվա ընդունելության քննությունները:

* *
*

Օգոստոսի 25-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարի Ավագ սեղանի վրա ս. պատարագ է մատուցում Տ. Նարեկ քհն. Մատարյանը:

«Հայր մեր»-ից առաջ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոլպայլյանը քարոզ է խոսում «Դու հողանիւթ սրովբէ ես. հարսն ի յերկրէ յերկինս ես. կԱստուած մարմնով ծնեալ ես. Աստուածածին մեղայ քեզ» (տաղ) բնաբանով:

Իր քարոզի մեջ սրբական հայրը համառոտակի կանգ է առնում Աստվածամոր կենսագրության վրա և նշում Աստվածածնի մեծ դերը փրկչագործական խորհրդում:

* *
*

Օգոստոսի 26-ին, երկուշաբթի.—Այսօր Վիեննայից ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Տ. Աբել աբեղա Օղլուգյանը:

ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԱՎԱՆԴԱՏԱՆ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

Ամենայն Հայոց Հայրապետի կարգադրությամբ և Մայր Աթոռի բարերար վենեսուելահայ Վարդգես Երեցյանի օժանդակությամբ վերանորոգվեց Մայր տաճարին կից գործող հայ եկեղեցական արվեստի ավանդատունը: Շուրջ վեց ամիս տևած վերանորոգումից հետո, 1985 թվականի հուլիսի 31-ին, Ս. Էջմիածին այցելող հյուրերի և հավատացյալների առջև իր դռները բացեց Մայր տաճարի ավանդատունը:

Ամբողջովին փոխվեցին ավանդատան ցուցապահարանները, որոնք պատրաստվել էին Հունգարիայում: Ավանդատան ձևավորման աշխատանքները ղեկավարեց ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ Գրիգոր Խանջյանը: Գեղեցիկ և լուսավորված պահարաններում կատարված ցուցադրումը կարծես նորովի բացահայտեց ցուցանմուշների պատմական և գեղագիտական արժեքը: Նոր ցուցադրման մեջ տեղ են գրավել հայկական արվեստի բարձրարժեք եկեղեցական իրեր և քրիստոնեական հավատքի սրբություններ՝ ինչպես Սուրբ Գեղարդը, փոքրիկ մասունքներ Նոյան տապանից և Քրիստոսի խաչափայտից և այլն: Այս մասունքներն ու հարուստ ցուցանմուշները մեծ ճանաչում են բերել Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և այն դարձրել ուխտատեղի:

ԹՂԹԱԿԻՑ

ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԱՎԱՆԴԱՏԱՆ ՑՈՒՑԱՓԵՂԿԵՐԻՑ

ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԱՎԱՆԴԱՏԱՆ ՑՈՒՑԱՓԵՂԿԵՐԻՑ



ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԱՎԱՆԴԱՏԱՆ ՑՈՒՑԱՓԵՂԿԵՐԻՑ

ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԱՎԱՆԴԱՏԱՆ ՑՈՒՑԱՓԵՂԿԵՐԻՑ